ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2012

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան .....3

Գյուտեր և օգտակար մոդելներ .....4

Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ .....6

Ֆիրմային անվանումներ.....10

Տեղեկատվական տեխնոլոգիաներ .....10

Գրանցված օբյեկտների նկատմամբ
իրավունքների փոխանցումը, լիցենզիաների
տրամադրումը և իրավունքների պահպանության
ժամկետների երկարաձգումը.....13

Իրավական դաշտ .....14

Միջազգային համագործակցություն .....15

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա՝ Արմեն ԱԶԻԶՅԱՆ
Անդրանիկ ԽԱՉԻԿՅԱՆ
Արփինե ԵԳԱՆՅԱՆ
Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Դիզայնը և էջադրումը՝ Կարինե ՄԵԼՈՅԱՆԻ

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին
Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

© *ՀՀ մտավոր սեփականության գործակալություն*

# ՆԱԽԱԲԱՆ

*Մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Մտավոր սեփականության գործակալությունը 2012թ. շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված իր հիմնական գործառույթների իրականացումը՝ ապահովելով գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաև պաշտոնական տեղեկությունների հրապարակման և իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:*

*Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են բնագավառի իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները:*

*Քննարկվել են ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված մի շարք նորմատիվային փաստաթղթերի նախագծեր, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկություններ և դիտողություններ:*

# ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

*2012թ. Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 141 գյուտի և 41 օգտակար մոդելի հայտ, որոնցից 175-ը՝ ազգային հայտատուներից, 7-ը՝ օտարերկրյա հայտատուներից:*

*2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 3679:*

Աղյուսակ 1

| Երկիրը | 2011 | 2012 |
|---|---|---|
| Հայաստան | 166 | 175 |
| Այլ երկրներ | 22 | 7 |
| **Ընդամենը** | **188** | **182** |

*2011թ. համեմատությամբ 2012թ. ստացված հայտերի ընդհանուր քանակը պակասել է 6-ով, ընդ որում ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը ավելացել է 9-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը պակասել է 15-ով:*

*Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ԺՆև) ներկայացվող միջազգային և Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) ներկայացվող եվրասիական հայտերով գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:*

*2012թ. գործակալությունը ստացել է 7 միջազգային հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է միջազգային հայտերի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Միջազգային բյուրո:*

*Այսպիսով, 1994-2012թթ. ժամանակահատվածում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո առաքվել է գյուտի 73 միջազգային հայտ:*

*2012թ. գործակալությունը ստացել է 3 եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է եվրասիական հայտի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:*

*Այսպիսով, 1997-2012թթ. ժամանա-*

*կահատվածում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 32 եվրասիական հայտ:*

*Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 187 հայտով, ընդ որում՝*

- *114 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին,*
- *38 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին,*
- *21 հայտով կայացվել են որոշումներ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին,*
- *11 հայտով կայացվել է որոշում գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին,*
- *3 հայտով կայացվել է որոշում օգտակար մոդելի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին:*

*Հայտերի քննարկման արդյունքները դիագրամի տեսքով բերված են նկ.1-ում:*

*2012թ. ազգային և օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ.2-ում՝ գրաֆիկի տեսքով:*

*2012թ. տրվել է գյուտի 117 արտոնագիր և օգտակար մոդելի 37 արտոնագիր:*

*2012 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության 2697 գյուտի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 292–ը, իսկ օգտակար մոդելի 313 արտոնագրերից գործում են 100-ը:*

*2012 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 3504 Եվրասիական արտոնագրեր:*




Նկ. 1

Նկ. 2




A. Մարդու կենսական պահանջների բավարարում
B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
C. Քիմիա, մետաղագործություն
D. Մանածագործություն, թուղթ
E. Շինարարություն, լեռնագործություն
F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ և պոմպեր, զենք և ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
G. Ֆիզիկա
H. Էլեկտրականություն

## ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

*2012թ. ազգային ընթացակարգով ստացվել են ապրանքային նշանների գրանցման 1780 հայտ (որոնցից 1122-ը՝ ազգային հայտատուներից), որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների դիագրամի տեսքով բերված է նկ.3-ում:*

*Ապրանքային նշանների 1700 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Հետ են կանչվել 9 հայտ, 95 հայտով կայացվել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումներ:*

*Գրանցվել են 1388 ապրանքային և սպասարկման նշաններ (որոնցից 839-ը՝ ազգային հայտատուների անունով): Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի և դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 3087 ծանուցում: Միջազգային ծանուցումներով կայացվել են 2121 որոշում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ, նախնական մերժման մասին կայացվել է 492 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 499:*

*Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 2-ում:*

*Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 28 հայտ:*

*2011թ. համեմատությամբ 2012թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը աճել է՝ 1105-ի դիմաց (2011թ.) 1122 հայտ:*

*Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը, ապա այն աճել է ազգային ընթացակարգով (612- ի (2011թ.) դիմաց 658 հայտ):*

*Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 57 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 43-ը՝ ազգային հայտատուներից, 5-ը՝ Ֆինլանդիայից, 4-ը՝ Կորեայի Հանրապետությունից, 3-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 1-ը՝ Չինաստանից, 1-ը՝ Ֆրանսիայից, որոնցից 24-ը ստացել են վկայագիր:*

*2011թ. համեմատությամբ 2012թ. արդյունաբերական նմուշի հայտերի քանակը աճել է՝ ազգային հայտատուներից ստացված՝ 26-ի դիմաց (2011թ.) 39 հայտ, իսկ օտարերկրյա հայտատուներինը՝ 3-ի դիմաց (2011թ.) 18 հայտ :*

Նկ. 3



Աղյուսակ 2

| Երկիրը | | Ըստ ազգային ընթացակարգի | Մադրիդյան համաձայնագրի եւ դրան կից արձանագրության շրջանակներում | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| AM | Հայաստան | 1122 | | 1122 |
| AE | Արաբական Միացյալ Ամիր. | 8 | | 8 |
| AT | Ավստրիա | | 42 | 42 |
| AU | Ավստրալիա | | 16 | 16 |
| BA | Բոսնիան և Հերցոգովինա | | | 0 |
| BG | Բուլղարիա | | 44 | 44 |
| BH | Բահրեյն | 1 | | 1 |
| BR | Բրազիլիա | 5 | | 5 |
| BX | Բենիլյուքս | 1 | 142 | 143 |
| BY | Բելառուս | | 47 | 47 |
| CA | Կանադա | 4 | | 4 |
| CH | Շվեյցարիա | 32 | 213 | 245 |
| CL | Չիլի | 1 | | 1 |
| CN | Չինաստան | 9 | 155 | 164 |
| CY | Կիպրոս | 5 | 9 | 14 |
| CZ | Չեխիայի Հանրապետություն | | 69 | 69 |
| DE | Գերմանիա | 9 | 241 | 250 |
| DK | Դանիա | 3 | 14 | 17 |
| EE | Էստոնիա | | 2 | 2 |
| EG | Եգիպտոս | 2 | 2 | 4 |
| EM | Եվրոպայի Միություն (OHIM) | | 182 | 182 |
| ES | Իսպանիա | 6 | 58 | 64 |
| FI | Ֆինլանդիա | 1 | 15 | 16 |
| FR | Ֆրանսիա | 10 | 130 | 140 |
| GE | Վրաստան | 4 | 9 | 13 |
| GB | Միացյալ Թագավորություն | 37 | 82 | 119 |
| GR | Հունաստան | | 4 | 4 |
| HK | Հոնգ Կոնգ | 2 | | 2 |
| HR | Խորվատիա | | 2 | 2 |
| HU | Հունգարիա | | 167 | 167 |
| IE | Իռլանդիա | 1 | 5 | 6 |
| IL | Իսրայել | 2 | 3 | 5 |
| IN | Հնդկաստան | 5 | | 5 |
| IR | Իրան | 2 | 8 | 10 |
| IT | Իտալիա | 10 | 201 | 211 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| JO | Հորդանան | 2 | | 2 |
| JP | Ճապոնիա | 55 | 52 | 107 |
| KR | Կորեայի Հանրապետություն | 27 | 10 | 37 |
| KW | Քուվեյթ | 1 | | 1 |
| KY | Կայմանյան կղզիներ | 4 | | 4 |
| KZ | Ղազախստան | | 12 | 12 |
| LB | Լիբանան | 1 | | 1 |
| LK | Լիխտենշտայն | | 14 | 14 |
| LV | Լատվիա | | 14 | 14 |
| LT | Լիտվա | | 18 | 18 |
| LU | Լյուքսեմբուրգ | 7 | | 7 |
| MA | Մարոկկո | | 2 | 2 |
| MC | Մոնակո | | 7 | 7 |
| MD | Մոլդովայի Հանրապետություն | | 14 | 14 |
| MK | Մակեդոնիա | 8 | 1 | 9 |
| MT | Մալթա | 14 | | 14 |
| MX | Մեքսիկա | 1 | | 1 |
| NL | Նիդերլանդներ | 18 | | 18 |
| NO | Նորվեգիա | | 2 | 2 |
| NZ | Նոր Զելանդիա | 1 | | 1 |
| PA | Պանամա | 12 | | 12 |
| PL | Լեհաստան | 11 | 65 | 76 |
| RO | Ռումինիա | | | 0 |
| PT | Պորտուգալիա | | 11 | 11 |
| RU | Ռուսաստանի Դաշնություն | 36 | 563 | 599 |
| SC | Սեյշելյան | 1 | | 1 |
| SE | Շվեդիա | 1 | 10 | 11 |
| SG | Սինգապուր | 3 | 9 | 12 |
| TR | Թուրքիա | 4 | 112 | 116 |
| TW | Տայվան | 1 | | 1 |
| SI | Սլովենիա | | 39 | 39 |
| SK | Սլովակիա | | 3 | 3 |
| VN | Վիետնամ | | 5 | 5 |
| VG | Վիրջինյան կղզիներ | 9 | | 9 |
| UA | Ուկրաինա | 14 | 99 | 113 |
| USA | ԱՄՆ | 266 | 163 | 429 |
| | Այլ երկրներ | 1 | | 1 |
| Ընդամենը | | **1780** | **3087** | **4867** |

## ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

2012թ. Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 1505 հայտ:

Գրանցվել է 1162 անվանում, մերժվել է 343-ը:

Համաձայն ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի հ. 872 որոշման, ֆիրմային անվանման մեջ «հայ», «Հայաստան», «հայկական» բառերի և դրանց թարգմանությունների օգտագործման համար հաշվետու ժամանակաշրջանում տրվել է 4 թույլտվություն:

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2012թ. լազերային սկավառակների վրա հրապարակվել են «Արդյունաբերական սեփականությունե պաշտոնական տեղեկագրի 12 համար՝ № 1 - № 12: Տեղեկագրերը հրապարակվել են երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն: Տեղեկագրերում ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 117 գյուտի, 37 օգտակար մոդելի արտոնագրերի, 21 արդյունաբերական նմուշի վկայագրերի, 1408 գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին, ընդգրկվել են նաև տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, ինչպես նաև տեղեկություններ արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին:

Հրապարակվել է «Ապրանքային և սպասարկման նշանների հայտեր» տեղեկագիրը: 2012 թվականին հրապարակվել է տեղեկագրի 24 համար:

Իրականացվել է գյուտերի և օգտակար մոդելների գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևերի, ինչպես նաև արդյունաբերական նմուշների նկարների ներմուծումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու համար, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինտերնետային կայքում, ինչպես նաև «CISPATENT» սկավառակի վրա տեղադրելու համար՝ համընդհանուր օգտագործման նպատակով:

Իրականացվել է 2011թ. «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը և հրապարակումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով և

դրանց էլեկտրոնային ձևերի պատրաստումը ինտերնետային էջում տեղադրելու համար:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ) ներկայացնելու համար պատրաստվել են 2011 թ. տեխնիկական և վիճակագրական հաշվետվությունները գյուտերի և օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների վերաբերյալ:

«Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրերը և գործակալության 2011թ. տարեկան հաշվետվությունը տեղադրվել են ինտերնետային էջում՝ համընդհանուր ծանոթացման նպատակով:

Պաշտոնական տեղեկագրերն անհատույց փոխանցվել են Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարաններ և Հայաստանի ազգային գրադարան, ինչպես նաև ազգային գրապալատ: Պաշտոնական տեղեկագրերն անհատույց ուղարկվել են նաև ՀՀ մարզային կենտրոններ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը:

Ի կատարումն «Կոմպակտ սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագրի, որին մասնակցում են ԱՊՀ 9 երկրներ, թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որտեղ զետեղված են Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 117 գյուտի և 37 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Վերոհիշյալ համաձայնագրի կատարման աշխատանքներն ընթացքում են: «CISPATENT» սկավառակներով տեղեկատվության փոխանակման շրջանակներում Մտավոր սեփականության գործակալությունը արտոնագրային տեղեկատվություն է ստանում Եվրոպական, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ավստրիայի, Ֆրանսիայի և Կանադայի արտոնագրային գերատեսչություններից կոմպակտ սկավառակներով:

2012թ. շարունակվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված գյուտերի և օգտակար մոդելների մասին տվյալների փոխանցումը Եվրասիական արտոնագրային գերատեսչություն՝ տեղեկատվական որոնման համակարգի հիմնապաշարի համալրման նպատակով:

Իրականացվել է գործակալության ինտերնետային էջի վերաձևավորում, մասնավորապես՝ գրաֆիկական դիզայնի վերաձևավորում, կառուցվածքի փոփոխություն, նոր բաժինների և ենթաբաժինների ավելացում:

Թարմացվել են գործակալության ինտերնետային կայքի «Վիճակագրական տվյալներ», «Օրենքներ», «Միջազգային պայմանագրեր», «Ենթաօրենսդրական ակտեր», «Ձևաթղթեր», «Պաշտոնական հրապարակումներ» ենթաէջերը:

Իրականացվել է «ապրանքային և սպասարկման նշանների գործավա-

*ություն» ենթահամակարգի արդիականացման տեխնիկական առաջադրանքի նախապատրաստում:*

*Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործակալության աշխատանքների ավտոմատացումը և տեխնիկական վերազինումը: Գործակալությունը վերազինվել է երեք Intel(R) Core i7 տեսակի համակարգիչներով, սերվերով, համակարգչային օժանդակ սարքերով և սարքավորումներով: Վերացվել են գործակալության տեղեկատվական համակարգի մեջ շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները և բացթողումները: Զարգացման արդյունքում առաջացած խնդիրների ներդրման նպատակով կատարվել են փոփոխություններ և լրացումներ Մտավոր սեփականության տեղեկատվական համակարգում:*

*Իրականացվել է SYMC Endpoint Protection Small Business Edition 12.1, ABBYY Lingvo x5, ABBYY FineReader11, Adobe Acrobat Professional 10, Photoshop CS5, InDesign CS5.5, MailWasher Pro, CorelDROW Graphics Suite X5 ծրագրային ապահովման լիցենզիաների թարմացում:*

*Իրականացվել է համակարգչային ծրագրերի տեղադրում և կարգաբերում, վնասված համակարգիչների և ծրագրերի ախտորոշում և անսարքության վերացում:*

# ԳՐԱՆՑՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ, ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ

*Հաշվետու ժամանակաշրջանում «Ապրանքային նշանների լիցենզիաները, դրանց փոփոխությունները և չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումները լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի և «Արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման» կարգի համաձայն գործակալությունը շարունակել է լիցենզային պայմանագրերի և գրանցված օբյեկտների նկատմամբ իրավունքների փոխանցման և լիցենզիաների տրամադրման դիմումների քննարկումը և պայմանագրերի գրանցումը:*

*2012թ. ընթացքում քննարկվել և գրանցվել են 131 դիմում, որոնցից 97-ը՝ ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու մասին, 16-ը՝ ապրանքային նշանների լիցենզիաները գրանցելու մասին, 5-ը՝ ապրանքային նշանների ֆրանչայզինգի, 3-ը՝ ապրանքային նշանների ենթալիցենզիաների և 5-ը՝ ապրանքային նշանների լիցենզիայի փոփոխությունը գրանցելու մասին, ինչպես նաև 4-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին, 1-ը՝ գյուտի արտոնագրային բացառիկ լիցենզիա տալու մասին:*

*Ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջև:*

*«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67–րդ հոդվածի և «Ապրանքային նշանների գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումների ձևակերպման և քննարկման» կարգի համաձայն գործակալությունը իրականացրել է 167 ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգում, ինչպես նաև 105 գյուտի, օգտակար մոդելի արտոնագրերով վերապահված և 7 արդյունաբերական նմուշի գրանցումից բխող իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգում:*

*2012թ. ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 1290 ապրանքային նշանների վկայագրեր, 117 գյուտի արտոնագրեր, 37 օգտակար մոդելների արտոնագրեր և 21 արդյունաբերական նմուշների վկայագրեր: Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 423 փոփոխություն:*

# ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

*Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են բնագավառի կատարելագործմանը վերաբերող աշխատանքները, ուշադրություն է դարձվել օրենսդրական պրակտիկայի ընդհանրացմանը և բնագավառի կատարելագործմանը վերաբերող աշխատանքներին, գլխավորապես՝ իրավական դաշտի կատարելագործմանը:*

*2012թ. նոյեմբերի 1–ի նիստում ՀՀ կառավարությունը հաստատել է «Մագնիսական, օպտիկական, թվային, լազերային և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կրիչների արտադրության կամ ներմուծման իրավունքը հաստատող տեղեկանք (հավաստագիր) տալու մասին» կարգը (N 1371 – Ն), որը մշակվել է համաձայն «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով մագնիսական, օպտիկական, թվային, լազերային և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կրիչների պարտադիր դրոշմավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի:*

*2012թ. նոյեմբերի 8–ի նիստում ՀՀ կառավարությունը հաստատել է նաև «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի կանոնադրությունը» և «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգը» (N 1501–Ն): Նշված նորմատիվային ակտերը մշակվել են համաձայն «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ, «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և «Աշխարհագրական նշումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասերի:*

*Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել են «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագծի մշակման աշխատանքները, որն իրականացվել է Եվրամիության անկախ փորձագետի կողմից՝ գործակալության մասնագետների մասնակցությամբ: Ավարտվել է նաև նախագծի հայերեն թարգմանությունը:*

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Մտավոր սեփականության գործակալության միջազգային համագործակցության հիմնական ուղղություններն են՝ Մտավոր սեփականության միջազգային կազմակերպության (ՄՍՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչության (ԵԱԳ), Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ) հետ աշխատանքային համագործակցության ամրապնդումն ու զարգացումը, մասնակցությունը տարբեր միջազգային պայմանագրերին ու համաձայնագրերին, գործակալության մասնագետների որակավորման բարձրացումը, ինչպես նաև երկկողմ և բազմակողմ կապերի զարգացումը ԱՊՀ երկրների նմանատիպ և օտարերկրյա արտոնագրային կազմակերպությունների, միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ:*

*Միջազգային համագործակցության շրջանակներում գործակալության մասնագետները մասնակցում են ՄՍՀԿ, ԵԱԳ, ԹԱՅԵՔՍ (TAIEX) և ԵԱԱԳ, ինչպես նաև ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպվող սեմինարներին, գործնական հանդիպումներին և որակավորման բարձրացման դասընթացներին:*

*2012 թվականի փետրվարի մեկից մեկնարկեց Թվինինգ ծրագիրը, որը կավարտվի 2014 փետրվարի 1-ին: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Թվինինգ ծրագրի հիմնական նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետությանը մտավոր սեփականության իրավունքների կիրարկման մասով առկա միջազգային լավագույն փորձի օգտագործման գործում՝ դրանով նպաստելով մտավոր սեփականության իրավակիրարկման համակարգի հզորացմանը:*

*Ծրագիրը կնպաստի նաև Եվրամիության և Հայաստանի միջև կնքված Համագործակցության և գործընկերության համաձայնագրով և Եվրամիության հարևանության քաղաքականության Գործողությունների ծրագրով ամրագրված Հայաստանյան կողմի պարտականությունների իրականացմանը:*